

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԴՏՊ-1141-11018/22 ՎՎԱԾ**

11 03 2022թ

Քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Ռաֆի Դուդակյանի, ի դեմս «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմնադրամի(այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «1141.«Ընտանիքներին՝ կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրի «11018. Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև **9 490 117** (ինը միլիոն չորս հարյուր իննսուն հազար հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում 1-ում: Ծրագիրը իրականացվում է Արագածոտնի մարզում՝ ամսական 110 շահառուի համար (պետական միջոցների հաշվին ծառայություն կտրամադրվի 110 շահառուի, կազմակերպության միջոցների հաշվին՝ ևս 10 շահառուի) :

1.3. Պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ պայմանագրի 9.7 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3 նախարարության համաձայնությունը ստանալու դեպքում՝ կատարել ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների հողվածային վերաբաշխում՝ բայց ոչ ավել, քան ֆինանսական առաջարկի ծախսային յուրաքանչյուր հողվածի 10%-ի չափով:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում:

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար մինչև 20-ը, պետական մարմին ներկայացնել հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն սույն պայմանագրի N 5 հավելվածի և հաշվետվություններ համաձայն սույն պայմանագրի N 2 և 3 հավելվածների, ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ (այդ թվում եռամսյակային հաշվետվություն)՝ մինչև հաշվետու ժամանակահատվածի հաջորդ ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա և 4-րդ եռամսյակի համար մինչև դեկտեմբերի 20-ը:

Ծրագրի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.7. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.8. Սույն պայմանագրի 4.1-րդ կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N

5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի: «Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհաճախսերի փոխհատուցման թերթիկ և այլն»:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և/կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից բացառապես նախօրոք մշակված հարցաթերթի միջոցով և/կամ ըստ անհրաժեշտության՝ առանց հարցաթերթի:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է կատարվող գործողությունների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով գործողություններին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կապ հաստատելով ծրագրի շահառուների հետ՝ նրանց շրջանում հարցում և եզրակացություն տալու նպատակով՝ առանց կազմակերպությանը տեղեկացնելու կամ ներգրավելու այս գործընթացում:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Եռամսյակային հաշվետվությունների ներկայացված և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է համապատասխան վարչության կողմից՝ ըստ անհրաժեշտության ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության հետ համատեղ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատրման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 5) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-

ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 4) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև 2022 թվականի մարտի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը (դրամաշնորհային ծրագիրը՝ պետք է բխի միջոցառումների նկարագրի պահանջներից և մեթոդական ցուցումներից) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 6):

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով

սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ <https://www.mlsa.am/?cat=142> կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.5. Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.6. Պայմանագրով ստանձնած պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ՝ պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում կողմերը իրավունք չունեն միմյանցից պահանջելու պարտավորության կատարում: Սույն կետում նշված պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում մյուս կողմին չծանուցելու դեպքում՝ չծանուցող կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գնի 1 %-ի չափով:

9.7. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.8. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

Միջոցառումներ

1. Համառոտագիր

«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» ծրագրի իրականացմամբ ՎՎ Հայաստանը նպատակ է հետապնդում աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան երեխաների ընտանիքում ապրելու և նրանց սոցիալական ներառումն ապահովելու, երեխայի (ընտանիքի) կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու խնդիրների լուծմանը: Ծրագրի իրականացումը մեծապես կնպաստի երեխաների սոցիալ-հոգեբանական զարգացմանը և հնարավորություն կստեղծվի կանխելու երեխաների մուտքը հաստատություններ և/կամ նրանց սոցիալական մեկուսացումը:

ՎՎ Հայաստանը ծրագիրը նախատեսում է իրականացնել իր «Երեխայի և ընտանիքի համայնքային զարգացման» ծառայությունների միջոցով՝ ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքում 2020թ-ից գործող «Նավակ» ցերեկային կենտրոնի միջոցով:

Նշված կենտրոնների կողմից տրամադրվող ծառայությունները կենսական նշանակություն ունեն կենտրոններ հաճախող երեխաների և նրանց ընտանիքների համար: Կենտրոնների գործունեության հիմնանպատակն է երեխաների երկարաժամկետ զարգացումը: Վորլդ Վիժն Հայաստանի ցերեկային կենտրոնները համայնքային մակարդակում կատարում են շատ կարևոր գործառույթ և լուծում առաջնային խնդիր ի շնորհիվ ծառայությունների մատուցման ինստիտուցիոնալ և մասնագիտական մոտեցումների, ամուր համակարգի և կառույցների, ինչպես նաև սոցիալական աջխատողների ցանցի, տեղական ՔՀԿ-ների, տեղական իշխանությունների և եկեղեցիների հետ սերտ համագործակցությամբ: Կենտրոններում մատուցվող ծառայությունները նպաստում են երեխաների սոցիալ-հոգեբանական և կյանքի հիմնական հմտությունների զարգացմանը, հոգեբանական խնդիրների հաղթահարմանը, ինչպես նաև ծնող-երեխա կապի ամրապնդմանը և ծնողների ծնողավարության, կենցաղավարության, ֆինանսական գրագիտության զարգացմանը:

Ծրագրի իրականացման համար ՎՎ Հայաստանը ունի երեխաներին ցերեկային խնամքի ծառայություններ տրամադրելու համար համապատասխան փորձ, մասնագիտական անձնակազմ, փորձարկված մեթոդաբանություն, համագործակցության լայն շրջանակ և համապատասխան շենքային և գույքային հնարավորություններ (կահավորված գրասենյակներ, գրականություն, խաղեր, սարքավորումներ և այլ անհրաժեշտ պարագաներ):

Ծրագրի իրականացման հաջող ընթացքը, շարունակականությունը և կայունությունը պայմանավորված են ՎՎ Հայաստանի կողմից իրականացվող բազմաթիվ այլ համանման ծրագրերի իրականացմամբ և արդեն իսկ ստեղծված ինստիտուցիոնալ հենքով:

Քովիդի համավարակի հետ կապված իրավիճակի բարդացման պարագայում կազմակերպությունը հաշվի կառնի հեռավար գործելակարգին անցնելու հնարավորությունը՝ ըստ պատկան մարմինների ցուցումների: Այդ պարագայում կենտրոնների աշխատակիցները համապատասխան խորհրդատվություն և աջակցություն կտրամադրեն շահառուներին:

2. Ծրագրի նկարագրություն

Չնայած վերջին տասնամյակի շարունակական սոցիալական և տնտեսական ձեռքբերումներին, երեխաների վիճակը Հայաստանում շարունակում է մնալ մտահոգիչ: Աղքատությամբ, Լեռնային Ղարաբաղում վերջին պատերազմի կործանարար հետևանքով և համավարակով պայմանավորված՝

ծառայել են մի շարք դժվարություններ և խնդիրներ, որոնք անհաղթահարելի են բազմաթիվ առավել խոցելի ընտանիքների և նրանց երեխաների համար:

2020թ.-ին աղքատության մակարդակը ըստ պաշտոնական վիճակագրության¹ գնահատվել է 27%, որը 0.6% տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա 26.4%-ից (հաշվարկված ըստ աղքատության միջին գծի): Ծայրահեղ աղքատ է համարվում բնակչության 0.7%-ը: Աղքատության մակարդակը քաղաքային բնակավայրերում կազմել է 48.9%՝ այդ թվում ք. Երևանում՝ 27.9%, այնինչ գյուղական բնակավայրերում՝ 51.1%: Մասնավորապես ՀՀ Արագածոտնի մարզում աղքատության մակարդակը գնահատվել է 32.9%, որը կազմում է ընդհանուր աղքատների 4.9%-ը: Այս ցուցանիշները, ամենայն հավանականությամբ, կաճեն առաջիկա տարիներին՝ Լեռնային Ղարաբաղում վերջին պատերազմի կործանարար հետևանքների և COVID-19 համավարակով պայմանավորված:

Ըստ Վորլդ Վիժն Հայաստանի կատարած՝ Հայաստանում ապրող երեխաների և նրանց ընտանիքների կյանքում կորոնովիրուսի հավամարակի ազդեցության արագ գնահատման (2020) (իրականացվել է ՀՀ 6 մարզերում և Երևանում), համավարակի բռնկումից հետո ամեն 4-րդ ընտանիքն ունի անկանոն եկամտի աղբյուր, հաճախ ծնողներն ի վիճակի չեն օգնել երեխաներին և բավարար ուշադրություն հատկացնել նրանց կրթությանը՝ խոցելիության պատճառով առաջացած իրենց հատուկ մտածելակերպի պատճառով: Ծնողների մեծամասնությունը չունի ծնողավարման հմտություններ և չի գնահատում սոցիալական և կյանքի հմտությունները, որոնք անհրաժեշտ են իրենց երեխաներին դաստիարակելու համար:

2020 թվականից Վորլդ Վիժն Հայաստանն իր **երեխայի և ընտանիքի զարգացման համայնքային ծառայությունները** ՀՀ տարածաշրջաններում իրականացնում է ՀՀ 6 մարզերում հիմնադրված 10 «Նավակ» ցերեկային կենտրոնների միջոցով, այդ թվում ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքում: Նշված կենտրոնների կողմից տրամադրվող ծառայությունները կենսական նշանակություն ունեն կենտրոններ հաճախող երեխաների և նրանց ընտանիքների համար: Կենտրոնների գործունեության հիմնանպատակն է երեխաների երկարաժամկետ զարգացումը: Բացի դա, Վորլդ Վիժն Հայաստանի ցերեկային կենտրոնները համայնքային մակարդակում կատարում են շատ կարևոր գործառույթ և լուծում առաջնային խնդիր ի շնորհիվ ծառայությունների մատուցման ինստիտուցիոնալ և մասնագիտական մոտեցումների, ամուր համակարգի և կառույցների, ինչպես նաև սոցիալական աշխատողների ցանցի, տեղական ԲՀԿ-ների, քաղաքապետարանների և եկեղեցիների հետ սերտ համագործակցությամբ:

Ծրագրի իրականացումը մեծապես կնպաստի ԿԴԻՀ երեխաների սոցիալ-հոգեբանական և կյանքի հիմնական հմտությունների զարգացմանը, կխթանի նրանց ընտանիքում մեծանալու, ինքնորոշման, ինքնօգնության և ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը՝ կանխելով նրանց մուտքը հաստատություններ: Ծրագիրը նպատակ ունի իր ծառայությունների միջոցով մեղմելու կամ ամբողջապես հաղթահարելու նաև ԿԴԻՀ երեխաների ընտանիքների խոցելի վիճակը:

3. Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները **Ծրագրի նպատակն է՝**

«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» ծրագրի նպատակն է Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան երեխաների ընտանիքում ապրելու և

նրանց սոցիալական ներառումն ապահովելու, երեխայի (ընտանիքի) կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու նպատակով գնահատված սոցիալական կարիքների հիման վրա համարժեք ծառայությունների տրամադրումը:

Ծրագրի խնդիրներն են՝

- Նպաստել երեխաների սոցիալ-հոգեբանական զարգացմանը,
- Կյանքի հիմնական հմտությունների զարգացմանը,
- Երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրել սոցիալ-վերականգնողական, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն,
- Խթանել երեխաների սոցիալ-վերականգնողական, ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը,
- Կանխելու նրանց մուտքը հաստատություններ և կամ նրանց սոցիալական մեկուսացումը,
- Խթանելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը:

Ակնկալվող արդյունքներ՝

- Թալինի տարածքում բնակվող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (ներառյալ հաշմանդամություն ունեցող) երեխաների կարիքները գնահատված են, դրանց հիման վրա ստեղծվել են անհատական սոցիալական ծրագրեր (ԱՍԾ), որոնք ամբողջապես իրականացվել են:
- Կենտրոնի ծառայություններից օգտված ԿԴԻՀ երեխաների և նրանց ընտանիքների 90%-ը գոհ են եղել տրամադրված ծառայություններից:
- Յուրաքանչյուր ամիս կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 120 երեխաներ և նրանց ընտանիքներ ստացել են ծառայություններ կենտրոնի կողմից:
- Երեխաների կրթական իրավունքի լիարժեք իրացման համար պայմանները ստեղծված են:
- Համայնքային մշակութային կյանքին ԿԴԻՀ երեխաների ընգրկվածությունն ապահովվել է:
- Շահառու երեխաների ծնողների առնվազն 90%-ը ստացել են ծառայություններ /ծնողավարման հմտություններ, ֆինանսական միջոցների տնօրինում և այլն/:
- Ցերեկային խնամքի ծառայություններում ներառած են հաշմանդամություն ունեցող երեխաներ և վարքային խնդիրներ ունեցող երեխաներ:
- Ծառայություններում ներդրված է առանձին բաղադրիչ վարքային խնդիրներ ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար:
- Երեխաները՝ ըստ կարիքի օգտվել են սոցիալական օգնականի աջակցությունից:
- Տրամադրված ծառայությունների արդյունքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների վիճակի մեղմվել է (առնվազն 60% շահառուների դեպքում) և դժվարին իրավիճակի ամբողջական հաղթահարվել է (առնվազն 40% շահառուների դեպքում):
- Ներկայացված հաշվետվություններ, հիմնավորող փաստաթղթեր և տեղեկատվական համակարգում իրականացված մուտքագրումները կատարվել են, հաշվետվությունները ներկայացվել են:

4. Գործողությունները և իրականացման մեթոդաբանությունը

«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» ծրագրի շրջանակներում նախատեսվող հիմնական գործողություններն են.

Գործողությունը	Իրականացման մեթոդաբանություն
1. Շահառուների նախնական	Շահառուների ընտրությունն իրականացվելու է համայնքային և մարզային մարմինների ու

<p>ընտրություն</p>	<p>շահագրգիռ բոլոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ՝ ապահովելու երեխայի հաստատությունում հայտնվելու դիսկի գնահատումը, իսկ հաստատությունում խնամք և դաստիարակություն ստացող երեխայի պարագայում՝ վերամիավորումը: Շահառուների ընտրությունն իրականացավելու է գործընկեր կազմակերպությունների տվյալների բազայի հիման վրա: ՀՄՏԿ-ի դեպք վարող սոցիալական աշխատողը ԿԴԻՀ երեխայի կարիքների ընդհանուր գնահատման հիման վրա ուղղորդում է տվյալ տարածքում ՍԱԾ մատուցող կառույց:</p>
<p>2. ԿԴԻՀ երեխաների կարիքների խորքային գնահատում և ընտրություն</p>	<p>Յուրաքանչյուր երեխայի կարիքի գնահատումը կիրականացվի ՎՎՀ-ի կոմից մշակված և փորձարկված մեթոդաբանության համաձայն: Շահառուները կընդգրկվեն կազմակերպության բազմամասնագիտական խմբի եզրակացության հիման վրա: Շահառուների ընդգրկումն իրականացվում է ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ կքնված պայմանագրի հիման վրա:</p>
<p>3. Երեխայի կարիքների խորքային գնահատման հիման վրա չափելի նպատակադրումներ սահմանում, անհատական սոցիալական ծրագրի (ԱՄԾ) մշակում</p>	<p>Գնահատված կարիքների հիման վրա բազմամասնագիտական խմբի կողմից ընտանիքի ամրապնդման ծրագրի մշակում, (ներառյալ՝ կենսապայմանների բարելավմանն ուղղված աշխատանքներ, ծնողավարման, կենցաղավարման հմտությունների բարձրացման դասընթացներ, մասնագիտական կողմնորոշման խորհրդատվական աշխատանքներ, սեփական եկամտի ստեղծմանն ուղղված խորհրդատվություն, քննարկումներ համապատասխան կառույցների հետ): ՍԱԾ-ի սոցիալական աշխատողի համակարգմամբ երեխայի սոցիալ-հոգեբանա-մանկավարժական կարիքների խորը գնահատում և երեխաների ԱՁԾ-ի կազմում (ԱՁԾ-ում կնշվեն երեխային տրամադրվող ծառայությունների տեսակները, ծավալը, ժամանակացույցը):</p>
<p>4. Երեխաներին ցերեկային խնամքի կենտրոններում ծառայությունների տրամադրում հետևյալ ուղղություններով</p>	
<p>✓ Կյանքի հմտությունների զարգացման խմբակներ - Երեխաների սոցիալ-հոգեբանական կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների զարգացում ըստ տարիքային խմբերի</p>	<p>Նպատակն է զարգացնել երեխաների հասակակիցների և մեծահասակների հետ հաղորդակցման հմտությունները, նպաստել հակասոցիալական վարքի դրսևորման մեղմացմանը, ինքնարտահայտման ունակությունների զարգացմանը: Խմբակներն իրականացվում են ըստ երկու տարիքային խմբերի՝ կրտսեր (6-10տ) և միջին (11-14տ): Սովորաբար յուրաքանչյուր խմբում ընդգրկված է 15-20 երեխա՝ հաշվի առնելով համավարակով պայմանավորված սահմանափակումները: Պարապմունքը վարում է կյանքի հմտությունների խմբակավարը՝ նախապես տրամադրած մոդուլներով, նյութերով և օրակարգով: Խմբակի հանդիպումների ընթացքում խմբակավարներն օգնում են երեխաներին ապահովել ներառականությունը խմբի ներսում, արտահայտել իրենց կարծիքը, ձեռք բերել հասակակիցների հետ շփման հմտություններ, ունենալ գիտելիքներ հիգիենայի կանոնների վերաբերյալ, սովորել լինել ընկերասեր, հոգատար, պատասխանատու:</p> <p>Վերը նշված հանդիպումների ընթացքում երեխաները նաև գեղագիտական դաստիարակության (նկարչություն, ապլիկացիա և այլն), ընթերցանության (գրքերի ընթերցում, քննարկում, բեմադրում և այլն), ինտելեկտուալ/զարգացման խաղերի պարապմունքներ են ունենում:</p>
